

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԽՈՇՈՐ ԳՈՐԾԱՐՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼՈՍԱՔՍՈՆԱԿԱՆ ԵՎ ՌՈՄԱՆԱ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

#### **Անուշ Մովսիսյան**

ՀՀ ԳԱԱ, իրավագիտության ֆակուլտետ, մագիստրոս  
anush27movsisyan@mail.ru, +374 77 404013

#### **Սահակ Մանուկյան**

ԵՊՀ, հանրային կառավարման ամբիոն, ի.գ.թ.  
manukyansahak@gmail.com, +374 95 242520

Սույն աշխատանքը նվիրված է խոշոր գործարքի ինստիտուտի առանձնահատկություններին անգլո-սաքսոնական և ռոմանո-գերմանական իրավական համակարգ ունեցող երկրներում: Հեղինակը ուսումնասիրել է խոշոր գործարքի իրավական կարգավորումները փարբեր երկրներում, վեր է հանել այդ երկրներում խոշոր գործարքի ինստիտուտի առանձնահատկությունները, անդրադարձել է նաև փարբեր երկրներում խոշոր գործարքի ընդհանրություններին, փարբերություններին և կատարել եզրահանգումներ:

**Հիմնաբառեր.** խոշոր գործարք, գույքի ձեռքբերում, գույքի օտարում, գործարքի առարկա, ակտիվների հաշվեկշռային արժեք, փոփոխական ընկերություն:

Տնտեսության բնականոն և կայուն զարգացման գործում առանձնահատուկ նշանակություն ունի խոշոր գործարքի ինստիտուտը, քանի որ այն իրավաբանական անձանց և քաղաքացիական իրավունքի մյուս սուբյեկտների համագործակցության հիմնական միջոցն է: Խոշոր գործարքի ինստիտուտի խորը և բազմակողմանի հետազոտությունը և համակարգային վերլուծությունը թույլ են տալիս վեր հանել տեսության մեջ առկա բազմաթիվ վիճահարույց հարցեր ու գործնական խնդիրներ, որոնց լուծումը կարևոր նշանակություն ունի տնտեսական ընկերությունների համար:

Սույն աշխատանքի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրավաբանական գրականության մեջ առաջին անգամ ուսումնասիրվում է խոշոր գործարքի առանձնահատկություն-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ները անգլո-սաքսոնական և ռոմանո-գերմանական իրավական համակարգերում:

Խոշոր գործարքի ինստիտուտը համընդհանուր և բազմակողմանի ուսումնասիրելու նպատակով անդրադառնանք խոշոր գործարքի առանձնահատկություններին անգլո-սաքսոնական և ռոմանո-գերմանական իրավական համակարգերում:

Այսպես՝ Անգլիայում և ԱՄՆ-ում խոշոր գործարքները ներառված են առավել լայն՝ «հատուկ գործարքներ» (extraordinary transactions, major transactions) հասկացության մեջ, այսինքն՝ գործարքներ, որոնք պահանջում են հաստատման հատուկ ընթացակարգ: Հաշվի առնելով, որ առաջին խոշոր բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Անգլիայում, հիմքեր կան ենթադրելու, որ խոշոր գործարքների ինստիտուտն առաջին անգամ ամրագրվել է անգլո-սաքսոնական երկրների օրենսդրությունում<sup>[1, c. 43]</sup>:

Այդպիսի եզրակացության է հանգել նաև Ս. Ա. Բուռլակովը՝ նշելով, որ խոշոր գործարքների վերաբերյալ նորմերն առաջին անգամ ամրագրվել են Անգլիայի և ԱՄՆ-ի օրենսդրությունում<sup>[2, c. 13-14]</sup>:

ԱՄՆ-ում բաժնետիրական ընկերությունների ստեղծումը և գործունեությունը կարգավորվում է օրենքով: Բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ նահանգների օրենսդրության հիմքում ընկած է «Բաժնետիրական ընկերությունների մասին» 1969 թվականի համընդհանուր ակտը (Model Business Corporation Act)<sup>[3]</sup>՝ ընդունված ամերիկյան Իրավաբանների ասոցիացիայի կողմից: Ըստ էությանը համընդհանուր ակտն օրինակելի փաստաթուղթ է, որն օգտագործում են շատ երկրներ իրենց իրավական ակտերը մշակելիս: Ներկայումս էլ ԱՄՆ-ում գործում է համընդհանուր ակտը, որը հիմնականում կարգավորում է շահերի բախմամբ գործարքների ինստիտուտը: Սակայն խոշոր գործարքների ինստիտուտը, ի տարբերություն շահերի բախմամբ գործարքների, ինքնուրույն չի կարգավորվում: Հաշվի առնելով, որ ԱՄՆ-ում օրենսդրության դերը մեծ է, համընդհանուր ակտը կրում է խորհրդատվական բնույթ: Առանձին նահանգների օրենսդրությունը կարող է պարունակել խոշոր գործարքների վերաբերյալ նորմեր:

Անգլիայում մինչև 2006 թվականը գործում էր 1985 թվականին ընդունված «Ընկերությունների մասին» ակտը<sup>[4]</sup>, որը դրույթներ էր պարունակում այնպիսի գործարքների վերաբերյալ, որոնք պահանջում են լիա-

զոր մարմնի կողմից հաստատում, բացի այդ, այդպիսի գործարքները կարող էին անվավեր ճանաչվել միայն ընկերության պահանջով:

Այսինքն՝ թե՛ ԱՄՆ-ի համընդհանուր ակտով, թե՛ Անգլիայի ընկերությունների մասին ակտով հիմնականում կարգավորվում էր շահերի բախմամբ գործարքների ինստիտուտը:

Սակայն 2006 թվականին Անգլիայում ընդունվեց Անգլիայի Միացյալ թագավորության «Ընկերությունների մասին» նոր օրենքը, որով արդեն կարգավորվում են թե՛ շահագրգիռ գործարքների և թե՛ խոշոր գործարքների ինստիտուտները:

Հարկ է նշելմեկ կարևոր առանձնահատկություն ևս. այն է՝ անգլո-սաքսոնական իրավական համակարգ ունեցող երկրներում տնտեսական ընկերությունները միշտ ունեն կառավարման երկու մարմին՝ տնօրենների խորհուրդ և գործադիր մարմին: Տվյալ դեպքում անգլո-սաքսոնական օրենսդրությունում խոշոր գործարքների հիմնախնդիրներից է, թե ո՞ր մարմինն է լիազորված խոշոր գործարքների վերաբերյալ կայացնել որոշում:

Ըստ անգլո-սաքսոնական հայեցակարգի՝ տնօրենների խորհուրդն այն կառավարման մարմինն է, որը որոշում է կազմակերպության քաղաքականության հիմնական ուղղությունները: Տվյալ դեպքում խնդիր է առաջանում գործադիր մարմնի և տնօրենների խորհրդի միջև լիազորությունների սահմանազատման հարցում: Այն դեպքում, երբ գործադիր մարմինը լիազորված է կատարել տնօրենների խորհրդի որոշումները և կնքել հասարակ գործարքներ, ապա տնօրենների խորհրդի խնդիրը կազմակերպության ռազմավարական կառավարումն է: Այստեղից առաջանում է այդ երկու մարմինների լիազորությունների սահմանազատման խնդիրը:

Այդ հարցում ԱՄՆ-ի դաշնային կորպորատիվ իրավունքը և Անգլիայի «Ընկերությունների մասին» օրենքը ընկերության բաժնետերերին տալիս են մեծ ազատություն, և վերջիններս կարող են ինքնուրույն կարգավորել այդ հարցերը՝ ընկերության կանոնադրության մեջ դրույթներ նախատեսելով:

Ուսումնասիրելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությունը՝ կարող ենք ընդգծել, որ Գերմանիայի «Բաժնետիրական ընկերությունների մասին» [5] օրենքում «խոշոր գործարքի» վերաբերյալ դրույթներ ամրագրված չեն:

Վ.Ի.Դոբրովոլսկին, անդրադառնալով Գերմանիայի օրենքում «խոշոր գործարք» հասկացության բացակայությանը, գտնում է, որ տվյալ հանգամանքը վկայում է բաժնետիրական ընկերության գործարքներ կնքող գործադիր մարմնի նկատմամբ վստահության բարձր աստիճանի մասին. «Ենթադրվում է, որ նրանք պետք է գործեն գիտակցաբար և բարեխիղճ ընկերության նկատմամբ»[6, շ. 53]:

Սակայն կարծում ենք, որ Գերմանիայում խոշոր գործարքի ինստիտուտի բացակայության հիմնական պատճառը ոչ թե վստահության բարձր աստիճանն է, այլ տնօրենների խորհրդի և գործադիր մարմնի միջև հարաբերությունները: Գերմանիայի «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի համաձայն՝ տնօրենների խորհրդի խնդիրն է հսկել գործադիր մարմնի գործունեությունը: Այդ նպատակներով տնօրենների խորհուրդը սկզբունքորեն կարող է բացահայտել գործադիր մարմնի ցանկացած գործարք, և եթե նպատակահարմար է գտնում, կարող է պահանջել համապատասխան գործարքը քննարկել խորհրդի կողմից թույլտվություն ստանալու համար: Դա նշանակում է, որ Գերմանիայում տնօրենների խորհուրդն է որոշում, թե գործադիր մարմնի ո՞ր գործարքները պետք է քննարկվեն խորհրդի կողմից թույլտվություն ստանալու համար: Այս հայեցակարգի առավելությունն այն է, որ ընդհանուր չափանիշների փոխարեն կարող են սահմանվել հատուկ չափանիշներ՝ իհարկե հաշվի առնելով կոնկրետ ընկերության առանձնահատկությունները: Սակայն այդ հայեցակարգի թերությունն այն է, որ տնօրենների խորհուրդը չի իրականացնի գործադիր մարմնի գործունեության նկատմամբ պատշաճ վերահսկողություն: Մինչդեռ, այդպիսի դեպքերում տնօրենների խորհրդի անդամները կրում են անձնական գույքային պատասխանատվություն իրենց պարտականությունների խախտման համար:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք նշել, որ անգլո-սաքսոնական իրավական համակարգ ունեցող երկրներում օրենսդիրը ընկերության կառավարման մարմիններին տալիս է որոշակի ազատություն ընկերության կառավարման լիազորությունների բաշխման հարցում, օրենսդրորեն սահմանվում են խոշոր գործարքի կնքման ընդհանուր կանոններ, իսկ խոշոր գործարքի կնքման ընթացակարգի մանրամասն կարգավորումներ ամրագրվում են յուրաքանչյուր ընկերության կանոնադրության մեջ:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև ԱՊՀ երկրների օրենսդրությունում խոշոր գործարքի ինստիտուտի առանձնահատկություններին:

Նախ՝ պետք է արձանագրել, որ ի տարբերություն անգլո-սաքսոնական իրավական համակարգ ունեցող երկրների, որտեղ գոյություն ունի կառավարման երկու մարմին՝ տնօրենների խորհուրդ և գործադիր մարմին, ռոմանո-գերմանական իրավական համակարգ ունեցող երկրներում առկա է կառավարման երեք մարմին՝ ընդհանուր ժողով, տնօրենների խորհուրդ, գործադիր մարմին:

Այսպես՝ ՌԴ-ում «Բաժնետիրական ընկերությունների մասին» դաշնային օրենքի[7] 78-րդ հոդվածի համաձայն՝ խոշոր են մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են ընկերության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույքի ձեռքբերման, օտարման կամ օտարման հնարավորության հետ, որի արժեքը կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 և ավելի տոկոսը, որը որոշվում է վերջին հաշվետու ամսվա հաշվետվության տվյալներով, բացառությամբ այն գործարքների, որոնք կնքվում են ընկերության առօրյա տնտեսական գործունեության ընթացքում, ինչպես նաև խոշոր են այն գործարքները, որոնք կապված են ընկերության հասարակ արժեթղթերի տեղաբաշխման հետ, որոնց հաշվարկները կատարվում են ՌԴ կառավարության սահմանած գներով:

Բելառուսի Հանրապետության «Բաժնետիրական ընկերությունների, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքը[8] սկզբնական խմբագրությամբ խոշոր գործարքների ինստիտուտի վերաբերյալ դրույթներ չէր պարունակում: Սակայն փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո ամրագրվեցին խոշոր գործարքի ինստիտուտը կարգավորող նորմեր:

Ինչպես նշում է Լ.Գ.Ռուսակը, սույն փոփոխությունները պայմանավորված են հետևյալով. «Ես գիտեմ դեպք, երբ գլխավոր տնօրենը, օգտվելով կանոնադրության անորոշ և ոչ հստակ դրույթներից, վաճառում էր ձեռնարկության գույքի մեծ մասը՝ այդ մասին տեղյակ չպահելով մասնակիցներին և չստանալով վերջիններիս թույլտվությունը: Երբ տնտեսական ընկերության մասնակիցները, իմանալով այդ մասին, դիմեցին դատարան գործարքն անվավեր ճանաչելու պահանջով,

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նրանց պատասխանեցին, որ տնօրենի համար կանոնադրության մեջ անհրաժեշտ էր սահմանել սահմանափակումներ՝ ելնելով գործարքի գումարից: Եթե հիմնադիր փաստաթղթերում այդպիսի սահմանափակումներ չկան, ապա հիմքեր չկան գործարքն անվավեր ճանաչելու համար»[9, c.77-81]:

Համաձայն Ղազախստանի Հանրապետության 2003 թվականի մայիսի 13-ի «Բաժնետիրական ընկերությունների մասին» թիվ 415-II օրենքի[10]68-րդ հոդվածի՝ խոշոր գործարք է համարվում այն գործարքը կամ փոխկապակցված գործարքների ամբողջությունը, որի արդյունքում ընկերության կողմից ձեռք է բերվում կամ օտարվում գույք, որի արժեքը կազմում է ընկերության ակտիվների արժեքի 25 տոկոսը և ավելին: Խոշոր գործարք է նաև այն գործարքը կամ փոխկապակցված գործարքների ամբողջությունը, որի արդյունքում ընկերության կողմից կարող են գնվել նրա տեղաբաշխված արժեթղթերը կամ վաճառվել ընկերության գնած միևնույն տեսակի տեղաբաշխված արժեթղթերի ընդհանուր քանակի 25 տոկոսը և ավելին: Կանոնադրությամբ կարող են նախատեսվել խոշոր գործարքներ համարվող այլ գործարքներ:

Նշված օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ խոշոր գործարքների վերաբերյալ բոլոր որոշումները կայացնում է տնօրենների խորհուրդը: Ընկերության պարտատերերին և բաժնետերերին տեղեկացնելու նպատակով ընկերությունը պարտավոր է խոշոր գործարքի կնքման վերաբերյալ տնօրենների խորհրդի կողմից որոշում կայանելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել հաղորդագրություն գործարքի վերաբերյալ: Այն դեպքում, երբ բաժնետերը համաձայն չէ խոշոր գործարքի վերաբերյալ տնօրենների խորհրդի որոշմանը, նա կարող է պահանջել Ընկերության կողմից բաժնետոմսերի հետգնում:

Ընկերության կանոնադրությամբ կարող է սահմանվել այն խոշոր գործարքների ցանկը, որոնց վերաբերյալ որոշումները, ինչպես նաև դրանց կնքման ընթացակարգը ընդունվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Օրենքով նախատեսված պահանջների չկատարումը խոշոր գործարք կնքելիս կարող է հանգեցնել շահագրգիռ անձանց կողմից դատական կարգով տվյալ գործարքի անվավեր ճանաչման:

Ինչպես երևում է վերոնշյալ նորմերի սահմանումից, թե՛ Ռուսաստանի, թե՛ Ղազախստանի կորպորատիվ օրենսդրության մեջ խոշոր գործարքի ինստիտուտը մանրամասն կարգավորում է ստացել, երկու պետությունների օրենքներում խոշոր գործարքի ինստիտուտը կարգավորող ընդհանուր նորմերը կան, սակայն այդուհանդերձ այս երկու պետությունների օրենքներում կան նաև որոշակի տարբերություններ:

Այսպես՝ Ղազախստանի օրենսդրությունում, ի տարբերություն Ռուսաստանի օրենսդրության, բացակայում են խոշոր գործարքների վերաբերյալ ընդհանուր կանոններից խոշոր գործարքների բացառությունները, օրինակ՝ գործարքները, որոնք կնքվել են ընկերության առօրյա տնտեսական գործունեության ընթացքում, խոշոր գործարքի հաստատման կարգը նույնպես տարբերվում է: Այսպես՝ Ղազախստանի օրենսդրությունում նախատեսված է, որ բողոքարկումը հնարավոր է բոլոր շահագրգիռ անձանց կողմից, իսկ ռուսական օրենսդրության համաձայն՝ խոշոր գործարքի կնքման որոշումը կարող են բողոքարկել միայն ընկերությունը կամ բաժնետերերը:

Ուկրաինայի 2008 թվականի սեպտեմբերի 17-ի «Բաժնետիրական ընկերությունների մասին» թիվ 514-VI օրենքի<sup>[11]</sup> համաձայն՝ խոշոր գործարքները կոչվում են «նշանակալի գործարքներ»: Ուկրաինայի օրենքում խոշոր գործարքը կարգավորվում է միայն 66-րդ հոդվածով, որի համաձայն՝ նշանակալի գործարքի կնքման վերաբերյալ որոշումն այն դեպքում, երբ գործարքի առարկա հանդիսացող գույքի կամ ծառայության արժեքը կազմում է ընկերության վերջին հաշվետու ֆինանսական տարվա հաշվապահական հաշվետվության տվյալներով ակտիվների արժեքի 10-25 տոկոսը, որոշումը կայացնում է տնօրենների խորհուրդը: Այն դեպքում, երբ տնօրենների խորհուրդը չի ընդունում նշանակալի գործարքի կնքման վերաբերյալ որոշում, այդպիսի գործարքի կնքման հարցը կարող է քննարկվել ընդհանուր ժողովի կողմից: Այն դեպքում, երբ նշանակալի գործարքի առարկա հանդիսացող գույքի կամ ծառայության արժեքը գերազանցում է ընկերության վերջին տարեկան ֆինանսական հաշվետվության տվյալներով ակտիվների արժեքի 25 տոկոսը, այդպիսի գործարքի կնքման վերաբերյալ որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից Վերահսկիչ խորհրդի դիմումի հիման վրա:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Եթե ընհանուր ժողովի անցկացման ամսաթվին հնարավոր չէ որոշել, ինչպիսի նշանակալի գործարքներ կկնքվեն ընկերության կողմից ընթացիկ տարվա տնտեսական գործունեության ընթացքում, ընդհանուր ժողովը կարող է ընդունել որոշում նշանակալի գործարքի նախնական հաստատման վերաբերյալ՝ նշելով գործարքի բնույթը և նրա սահմանային արժեքը, որը կարող է նրա կողմից իրականացվել առավելագույնը մեկ տարվա ընթացքում:

Այսինքն՝ Ուկրաինայում, ի տարբերություն թե՛ Ռուսաստանի, թե՛ Հայաստանի օրենսդրության, նախատեսված է խոշոր գործարքների առավել բարձր շեմ՝ ընկերության ակտիվների 10 տոկոսից սկսած: Բացի այդ, որպես խոշոր գործարքի արժեքի որոշման հիմք է ընդունվում ընկերության վերջին ֆինանսական տարվա դրությամբ հաշվեկշռում արտացոլված ակտիվների արժեքը:

Առանձնահատուկ է նաև մոտակա մեկ տարվա համար ընդհանուր ժողովի կողմից խոշոր գործարքների նախնական հաստատման վերաբերյալ դրույթը: Սակայն կարծում ենք, որ սույն դրույթը այնքան էլ կիրառելի չէ, քանի որ դրույթից չի բխում, թե ինչ կերպով կարելի է կանխորոշել՝ ինչպիսի գործարքներն են մոտակա տարվա ընթացքում կնքվելու ընկերության կողմից: Հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրինակ՝ ռուսական օրենսդրության համաձայն՝ գործարքի կնքման վերաբերյալ որոշման մեջ պետք է նշվի գործարքի գինը, առարկան և այլ էական պայմանները, ինչը հիմնականում հնարավոր չէ նախապես արտացոլել:

Ուկրաինայի օրենքում ընդհանրապես որևէ դրույթ ամրագրված չի օրենքի խախտմամբ կնքված խոշոր գործարքի հետևանքների վերաբերյալ, այսինքն՝ բացակայում է դրույթն այն մասին, թե օրենքի խախտմամբ կնքված խոշոր գործարքը ո՞ր դեպքում է առոչինչ, ո՞ր դեպքում՝ վիճարկելի:

Հայաստանի Հանրապետությունում խոշոր գործարքի ինստիտուտը կարգավորող նորմերն ամրագրված են միայն «Բաժնետիրական ընկերությունների մասին»[12] և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»[13] օրենքներում: Համաձայն նշված օրենքների՝ խոշոր են համարվում մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք, բացառությամբ ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարք-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ների, ուղղակի կամ անուղղակի կապված են ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 և ավելի տոկոսը, եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված չէ խոշոր գործարքի այլ չափ:

Խոշոր գործարքի հասկացությունը սահմանող նորմերի վերլուծությունից բխում է, որ և՛ Հայաստանում, և՛ Ռուսաստանում բաժնետիրական ընկերությունների մասին օրենքներում նույնանման սահմանում է ամրագրված, սակայն այն տարբերությամբ, որ եթե Հայաստանում խոշոր գործարքներ կնքելիս գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը որոշելիս հիմք են ընդունում գործարքը կնքելու պահի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքի 25%-ը, ապա Ռուսաստանում խոշոր գործարքներ կնքելիս գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը որոշելիս հիմք են ընդունում վերջին հաշվետու ամսվա հաշվապահական հաշվետվության տվյալները:

Գտնում ենք, որ Հայաստանում խոշոր գործարքներ կնքելիս գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը որոշելիս պետք է հիմք ընդունել վերջին հաշվետու ֆինանսական տարվա հաշվապահական հաշվետվության տվյալները, ինչպես Ուկրաինայում, իսկ գործարքը կնքելու պահի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը հիմք ընդունելը այնքան էլ հիմնավոր չէ, քանի որ խոշոր գործարք կնքելիս տնտեսական ընկերությունը նախքան գործարք կնքելը կարող է նոր ակտիվներ, գույք ձեռք բերել և տվյալ դեպքում գույքի արժեքը չի գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25%-ը, հետևաբար գործարքը չի համարվի խոշոր, ուստի վերջին հաշվետու ֆինանսական տարվա հաշվապահական հաշվետվության տվյալները հիմք ընդունելը առավել արդարացի է և իրավաչափ:

Չնայած ԱՊՀ երկրների կորպորատիվ օրենսդրությունների պատմական զարգացման ընդհանուր օրինաչափությանը և խոշոր գործարքների ինստիտուտի իրավական կարգավորման կանոնների ընդհանրությանը՝ այնուամենայնիվ, ԱՊՀ երկրների օրենսդրություններում խոշոր գործարքների ինստիտուտի կարգավորման որոշակի տարբերություններ կան: Նախ՝ դրանք վերաբերում են խոշոր գործարքի հասկացությանը և խոշոր գործարքի հաստատման կարգին:

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Այսպես՝ խոշոր գործարքների ինստիտուտի վերաբերյալ ՌԴ օրենսդրության առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն ԱՊՀ այլ երկրների օրենսդրության՝ Ռուսաստանի օրենսդրությամբ խոշոր գործարքների վերաբերյալ առանձին դրույթներ առավել մանրամասն են կարգավորում այդ ինստիտուտը, առավել մանրամասն են անդրադառնում հատկապես խոշոր գործարքների վերաբերյալ պահանջների չպահպանման հետևանքներին՝ իհարկե հաշվի առնելով նաև հակառակորդ ընկերության շահերը:

Ամփոփելով խոշոր գործարքի առանձնահատկությունները անգլո-սաքսոնական և ռոմանո-գերմանական իրավական համակարգերի երկրների կորպորատիվ օրենսդրությունում՝ կարող ենք եզրակացնել, որխոշոր գործարքի ինստիտուտը ձևավորվել է Անգլիայում և ԱՄՆ-ում, սույն ինստիտուտը կարգավորող նորմերը առաջին անգամ ի հայտ են եկել Անգլիայի և ԱՄՆ-ի բաժնետիրական ընկերությունների մասին օրենքներում: Այդ օրենքներում խոշոր գործարքների վերաբերյալ առկա են ընդհանուր կանոններ, որոնք առավել մանրամասն կարգավորվում են յուրաքանչյուր ընկերության կանոնադրության մեջ՝ ամրագրելով նշված ինստիտուտի գոյությունը: Չնայած խոշոր գործարքների կարգավորման վերաբերյալ ՌԴ և ԱՊՀ երկրների օրենսդրությունում որոշ ընդհանուր կանոնների առկայությանը՝ այդուհանդերձ, Ռուսաստանի օրենսդրությունը տարբերվում է խոշոր գործարքի վերաբերյալ մի շարք դրույթների մանրամասն կարգավորվածությամբ, որի հետևանքով խոշոր գործարքի ինստիտուտը առավել ամբողջական է հենց Ռուսաստանում:

Այսպիսով ուսումնասիրելով միջազգային փորձը և վերլուծելով խոշոր գործարքի իրավական կարգավորումները, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայաստանում խոշոր գործարքի ինստիտուտը դեռևս գտնվում է կայացման փուլում, կան այս ինստիտուտը կարգավորող իրավական լուծում պահանջող օրենսդրական բացեր, ուստի վերոշարադրյալ նկատառումներից ելնելով՝ գտնում ենք, որ առավել նպատակահարմար կլինի սահմանել խոշոր գործարքի հասկացության նոր բնորոշում, ըստ այդմ առաջարկում ենք խոշոր գործարքի հասկացությունը սահմանել հետևյալ կերպ. «խոշոր են համարվում մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք, բացառությամբ ընկերության բնականոն/առօրյա տնտեսական գործունեության շրջա-

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են ընկերության կողմից գույքի, աշխատանքների, ծառայությունների, մտավոր գործունեության արդյունքների գույքային իրավունքների ձեռքբերման, օտարման կամ օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը վերջին հաշվետու ֆինանսական տարվա հաշվապահական հաշվետվության տվյալներով կազմում է այդ ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 և ավելի տոկոսը»:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Филиппова О.С., Крупные сделки хозяйственных обществ по законодательству российской федерации, Омск, 2014:
2. Бурлаков С.А., Правовое регулирование крупных сделок юридических лиц, Москва, 2010:
3. MODEL BUSINESS CORPORATION ACT, 1969:
4. UNITED KINGDOM COMPANIES ACT, 1985:
5. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Գերմանիայի Դաշնության օրենք(ընդունված 06.09.1965):
6. Добровольский В.И., Анализ и комментарий корпоративного законодательства и судебной практики, «Волтерс Клувер», Москва, 2007:
7. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Ռուսաստանի Դաշնության օրենք (ընդունված 26.12.1995թ.):
8. «Տնտեսական ընկերությունների մասին» Բելառուսի Հանրապետության օրենք (ընդունված 09.12.1992թ.):
9. Русак Л.Г., Закона Республики Беларусь, Минск, 2003:
10. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք (ընդունված 13.05.2003 թ.):
11. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Ուկրաինայի Հանրապետության օրենք, (ընդունված 17.09.2008թ.):
12. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք (25.09.2001), ՀՀՊՏ 2001.11.06/34(166):
13. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք (24.10.2001), ՀՀՊՏ 2001.12.07/38(170):

---

ОСОБЕННОСТИ КРУПНОЙ СДЕЛКИ В АНГЛО-САКСОНСКИХ И  
РОМАНО-ГЕРМАНСКИХ ПРАВОВЫХ СИСТЕМАХ

**Ануш Мовсисян**

НАН РА, юридический факультет, магистр

**Саак Манукян**

ЕГУ, кафедра государственного управления, к.ю.н.

Данная работа посвящена особенностям института крупных сделок в странах англо-саксонской и романо-германской правовых систем. В статье изучены юридические оформления крупной сделки в разных странах, поднят вопрос об особенностях института крупных сделок в этих странах, также сделана попытка представить черты сходства и различия между крупными сделками в разных странах, сделаны соответствующие выводы.

**Ключевые слова:** крупная сделка, приобретение имущества, отчуждение имущества, предмет сделки, балансовая стоимость активов, экономическая компания.

THE PECULIARITIES OF THE MAJOR TRANSACTION IN  
ANGLO-SAXON AND ROMANCE-GERMANIC LEGAL SYSTEMS

**Anush Movsisyan**

NAS RA, Faculty of Law, Master

**Sahak Manukyan**

YSU, Department of Public Administration, PhD in Law

The article is devoted to the peculiarities of the major transaction institutions in the countries of the Anglo-Saxon and Roman-German legal systems. The paper examines the legal regulations of the major transaction in different countries, a question is raised about the peculiarities of the major transaction institutions in these countries. As well, the article attempts to present the similarities and differences between major transactions in different countries, and draws appropriate conclusions.

**Keywords:** major transaction, acquisition of property, alienation of property, subject of transaction, carrying value of assets, economic company.